

«ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՁ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«АРМЛЕС» ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

«ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ
ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
Տնօրեն

Ф И Л И А Л
«СТЕПАНАВАНСКИЙ
ЛЕСХОЗ»
Директор

ՀՀ Լոռու մարզ, ք.Ստեփանավան, Լժվեհի փողոց 68

Հ/ն. 0-256 2-22-89

24.08.2015թ. N 45

**Ստեփանավանի Օրիուս կենտրոնի
համակարգող Մ. Մելիքջանյանին**

Ի պատասխան Ձեր 18.08.2015թ. թիվ 002-26 գրության՝ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ, հայտնում ենք.

1. ՀՀ Ստեփանավանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Ստեփանավանի անտառապետության թիվ 14 պահաբաժնում (Պուլկինո գյուղի հարակից տարածք) հատումները կատարվում են համաձայն «Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի 16.01.2015թ-ի թիվ 01 հրամանի:

Հատատեղերը հատկացված են անտառկառավարման պլանով նախատեսված տեղերում և ծավալներով: Թիվ 00530 և թիվ 00531 անտառահատման տոմսերով հատկացված են սանիտարական հատատեղեր և 00534 անտառահատման տոմսով հատկացվել է անցումային հատատեղ:

2.Մասնաճյուղի Գյուլագարակի անտառապետության «Դենդրոպարկ»-ի հարևանությամբ թիվ 6 պահաբաժնում՝ համաձայն «Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի 16.01.2015թ-ի թիվ 01 հրամանի, թիվ 00674 անտառահատման տոմսով հատկացվել է անցումային հատատեղ, իսկ թիվ 00678 անտառահատման տոմսով հատկացվել է նոսրացման հատատեղ, որոնք ներկայումս շահագործման ընթացքում են:

3.2014թ-ի ընթացքում ապօրինի հատումներ «Ստեփանավանի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառապետություններում չեն եղել: 2015թ. ընթացքում հայտնաբերվել են ապօրինի հատված ընդամենը 4 ծառեր, որից

Ստեփանավանի անտառապետության թիվ 6 պահաբաժնում 3 հատ սոճենի տեսակի ծառեր, որի վերաբերյալ կազմվել է թիվ 001572 անտառխախտման արձանագրությունը և Ստեփանավանի անտառապետության թիվ 14 պահաբաժնում 1 հատ հաճարենի տեսակի ծառ, որի վերաբերյալ կազմվել է թիվ 001571 անտառխախտման արձանագրությունը:

4. Հակահրդեհային միջոցառումները պլանավորելու նպատակով, յուրաքանչյուր տարի կազմվում է տարեկան հակահրդեհային միջոցառումների համալիր ծրագիր, որը համաձայնեցվում և հաստատվում է Լոռու մարզի արտակարգ իրավիճակների վարչության և Լոռու մարզի մարզպետի կողմից:

5. Անտառվերականգնման ուղղությամբ ներկայումս աշխատանքներ չեն կատարվում և 2015թ-ի ֆին պլանով դրանք նախատեսված չեն:

Տնօրեն



Ա. Միկոյան